# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 46,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
## 26 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 41

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11. կետերի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Արա Իսրաելյանի դիմումը, **որոշում եմ.**

1.Քաղաքացի Արա Իսրաելյանին սեփականության իրավունքով պատկանող, Վերին Պտղնի <<Նոր>> թաղամաս, 2-րդ փողոց, թիվ 10 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 285,82 քմ բնակելի տունը, 4,45քմ ինքնակամ շինությունը, 7,25 քմ ծածկարանը և 4,2 քմ պարիսպը համարել օրինական:

2. Սահմանել,որ հողամասի սեփականատերը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Վերին Պտղնի համայնքի բյուջեի N 900105231212 հաշվեհամարին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 767936/ յոթ հարյուր վաթսուն յոթ հազար ինը հարյուր երեսունվեց / ՀՀ դրամ օրինականացման վճարը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021թ.հունվարի 26
գ.Վերին Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670կ.փոստ
verinptghni.kotayq@mia.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ
## 26 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 42

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման **մասին** >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասին 17-րդ կետի պահանջը ,ինչպես նաև Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 03-ի թիվ 25-Ա որոշման պահանջը և քաղաքացի Սուսաննա Պողոսյանի 2021թ-ի հունվարի 22-ի դիմումը **որոշում եմ**

Փոփոխել քաղաքացի Սուսաննա Պողոսյանի սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 07-062-0041-0007 / 0.03812 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության << հասարակական կառուցապատման գործառնական նշանակության >>:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021թ.հունվարի 26
գ.Վերին Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
## 26 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 43

## ՍՈՒՍԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Սուսաննա Պողոսյանին սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 07-062-0041-007/ 0.03812 հա հողատարածքին և նրա վրա առկա շինություններին տրամադրել հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, Երևան-Աբովյան խճուղի թիվ 7։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ. հունվարի 26
գ.Վերին Պտղնի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 46,հեռ.060517670, Էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 44**

## ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ**

2021 թվականի հունվարի 29-ին ժամը 15:00-ին հրավիրել Վերին Պտղնի համայնքի ավագանու արտահերթ նիստ ՝հետևյալ օրակարգով

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ սուբվենցիան ստանալու նպատակով Վերին Պտղնի համայնքային փողոցների կառուցման (նորոգման) ասֆալտապատման ծրագիրը հաստատելու մասին:
2. Վերին Պտղնի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
3. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 55-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված շինությունն օրինական ճանաչելու և անշարժ գույքն ուղղակի վաճառքի եղանակով՝ գնման նախապատվության իրավունք ունեցող անձին օտարելու մասին:
5. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 63-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

**2021 թ.հունվարի 27**
**գ.Վերին Պտղնի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670, էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 45**

## «ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ» ԱՁ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 53-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով <<Սամվել Գրիգորյան>> ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Սամվել Գրիգորյան» ԱՁ-ին տրամադրել ոգելից և ալկոհոլային խմիչքների և օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն 2021 թվականի I-ին եռամսյակի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ.հունվարի 29
գ.Վերին Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 46,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ
### 29 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 46

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, կետերի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Մարկոսյանի 2021 թ-ի հունվարի 25-ի դիմումը, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Արմեն Մարկոսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Վերին Պտղնի , 3-րդ փողոց, թիվ 6 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բ/պ 1.1քմ, պահեստ 32.9քմ, ավտոտնակ 9.0քմ, պարիսպ 13.2քմ և 11.3քմ համարել օրինական:

2. Սահմանել,որ հողամասի սեփականտերը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Վերին Պտղնի համայնքի բյուջեի N 900105231212 հաշվեհամարին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 105300/ մեկ հարյուր հինգ հազար երեք հարյուր / ՀՀ դրամ օրինականացման վճարը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցները ենթակա չեն պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

**2021թ. հունվարի 29**
**գ.Վերին Պտղնի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 46 , Հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**01 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 47**

## <<ԷԴԵՄ ՀԱՍ>> ՍՊԸ-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ,ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 53-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով <<Էդեմ Հաս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ**

1. <<Էդեմ Հաս>> ՍՊԸ-ին տրամադրել համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման, ինչպես նաև ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացման թույլտվություն՝ 2021 թվականի I-ին եռամսյակի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ.փետրվարի 01
գ.Վերին Պտղնի